

— սակայն հաւանականաբար Գորպուլիի պէս ուաղ արդեամբք:

Կ'երեւայ թէ այնուհետեւ այս փորձերէն ձեռնթափ եղան, մինչեւ որ 1828ին բարձրագոյն հրամանաւ վերստին նոյնին ձեռնարկուեցաւ. այս ժամանակ Հ. Պօղոս Վ. Յովնանեան Վիեննայէն ղրկուեցաւ Սուլափա, որ հայերէն լեզուաւ կը յորդորէր Հայերն ի միութիւն, բայց չկրցաւ արդիւնք մը յառաջ բերել¹⁷²: Դաեւ անօգուտ եղաւ Լեմպերկի հայ-կաթողիկէայ Արքեպիսկոպոսին՝ Սամուէլ Ստեփանովիչին երկու անգամ ի Սուլափա երթնելու յաճախակի քարոզութիւնն, որ եւ Հայոց ժողովրդապետական եկեղեցւոյն մէջ Յովհաննէս Պոթուշան հայ աւրեւելեան քահանային հետ “եւ յՈրդւոյ” յաւելուածին վրայ վիճեցաւ, եւ քահանայն անոր այս միացընելու փորձին համար՝ հրապարակաւ անէծք կարդաց անոր վրայ: Այսպէս նաեւ անպտուղ մնացին յաջորդ առաքեալներուն եռանդուն ճիգերն, որպիսիք են՝ Ֆլորիան Միդուլքի 1839ին, Իսակովիչ, Իգնատիոս Ստեփանովիչ¹⁷³ եւ այժմ՝ Ա. Դաւիթովիչ:

Պուքովինայի գրաւման ժամանակ՝ որովհետեւ Սուլափայի արեւելեան Հայք սեպհական եպիսկոպոս չունէին եւ ոչ ալ աւստրիական կայսրութեան մէկ երկրին մէջ կար, Յովսէփ Բ. կայսրն¹⁷⁴ Աստրախանի Յովսէփ Արղութեանց Արքեպիսկոպոսին խնդրանաց համեմատ՝ 1786 Մարտ 15ին հրաման տուաւ, որ Պուքովինայի Հայք իրենց քահանայքը հայրենիքէն բերել